ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

29.10.2025 N 02-501

ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ -ի տնօրեն Մ. Աղաջանյանին
ՀՎՀՀ՝ 02823566
Հասցե՝ Ք. Երևան, Աբովյան փ/23
Հեռ՝ 094277400
Էլ. փոստ՝ arg.aj@mail.ru

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Աղաջանյան, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի և ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ -ի միջև 11.02.2025թ. կնքվել է ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-1 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 18587227.89 (տասնութ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր քսանյոթ դրամ ութսունինը լումա) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Կնքված պայմանագրի շրջանակներում ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ից բազմաթիվ անգամներ պատվիրվել է «Դեքսկետոպրոֆեն(տրոմետամոլային աղիտեսքով) 50մգ/2մլ», պայմանագրով նախատեսված 3000 հատի փոխարեն մատակարարվել է 400 հատ և մատակարարի կողմից ս. թ. հուլիսի 2-ից մինչ օրս չի իրականացվել ոչ մի մատկարարարում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը, ՀՀ Կառավարության 2017թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, պայմանագրի 8,11 կետը, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ն մասամբ լուծում է ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հետ կնքված ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-1 ծածկագրով գնման պայմանագիրը (15-րդ չափաբաժնի մասով):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ Պատվիրատուի 1930030219151000 հաշվեհամարին, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

- պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Դիանա Մադոյան
Գնումների համակարգող
Հեռ՝ 093023401